# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանի և շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ Ոսկեհատ Գրիգորյանի Հնդկաստանի Հանրապետություն՝ Միսուոր քաղաք գործուղման արդյունքների վերաբերյալ

## 1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՔ

Արամ Մեյմարյան
Ոսկեհատ Գրիգորյան

## 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ

## 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Հնդկաստանի Հանրապետություն, քաղաք Միսուրու
2023 թվականի ապրիլի 7-12

## 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանություն, Հնդկաստանի Հանրապետության շրջակա միջավայրի, անտառների և կլիմայի փոփոխության և աշխատանքի և զբաղվածության նախարարություն

## 5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցելու «Վագրի ծրագրի (Project Tiger)» 50-ամյակին նվիրված և «Մեծ կատուների միջազգային համագործակցություն (International Big Cat Alliance)» համաժողովներին

## 6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

«Վագրի ծրագրի (Project Tiger)» 50-ամյակին նվիրված 2-օրյա համաժողովը կազմակերպվել էր Հնդկստանի կառավարության կողմից և նվիրված էր դեռևս 1973 թվականից մեկնարկած Վագրի ծրագրի արդյունավետ իրականացման 50-ամյակին: Հրավիրված էին ինչպես ծրագրի մասնակից երկրները այնպես էլ այլ երկրների ներկայացուցիչներ շուրջ 13 երկրներից:

Բացման խոսքով հանդես եկավ Հնդկաստանի շրջակա միջավայրի, անտառների և կլիմայի փոփոխության նախարար Բուպենդավ Յադավը: Ներկայացրեց Ծրագրի գրանցած հաջողությունները առ այն, որ Հնդկաստանում վերջին 10 տարիների ընթացքում վագրերի թվաքանակը կրկնապատկվել է հասնելով 3167-ի: Ներկայումս Հնդկաստանը հանդիսանում է աշխարհում վայրի բնության մեջ գտնվող վագրերի պահպանության ամենամեծ երկիրը՝ աշխարհում վագրերի 70%-ը պահպանվում է այս երկրում և առկա է վագրերի պահպանության 53 արգելոց: «Վագրի

Ծրագիրը» (Project Tiger) աշխարհում տեսակների պահպանությանն ուղղված ամենամասշտաբային նախաձեռնություններից է, այն հետևողական գործողությունների ու ձեռնարկված միջոցառումների շնորհիվ կարողացել է օգնել աշխարհում վագրերի թվաքանակի պահպանմանը և տեսակների վերականգնմանը: Ներկայացրեց այն միջոցառումները, որոք իրականացվել է Հնդկաստանի կառավարությունը վայրի կենդանիների, մասնավորապես վագրերի և մյուս խոշոր կատվազգիների պահպանության և պաշտպանության նպատակով: Արձանագրվեց այդ միջոցառումների իրականացման դրական ազդեցությունները և արդյունքները:

Հանդիպման պաշտոնական մասի հանդիսավոր բացումն իրականացրեց Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդին: Հանդիսավոր կերպով ներկայացվեց Ծրագրի համալիր ձեռնարկը, Վագրի հուշամեդալը, Ծրագրի արդյունավետության հաշվետվությունը, Ծրագրին արդյունքներին նվիրված կարճամետրաժ ֆիլմը: Նա հանդես եկավ ելույթով՝ նշելով գլոբալ կենսաբազմազանության, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ Հնդկաստանի կողմից ձեռնարկված քայլերը: Ես մեկ անգամ կարևորեց Վագրի ծրագրը, տրվեց Մեծ կատուների միջազգային համագործակցության մեկնարկը և մատնանշեց բոլոր երկրների ջանքերի համատեղման կարևորությունը այս կարևորագույն միջոցառումների հաջողությամբ իրականացման համար:

Պաշտոնական միջոցառման երկրորդ մասում իրականացվեցին պարգևատրման արարողություններ Վագրի Ծրագրի իրականացման գործում առանցքային դերակատարում ունեցող աշխատակիցներին:

## 7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Աշխարհի տարբեր երկրներից Հնդաստան ժամանած բնապահպանության ոլորտի ներկայացուցիչ պաշտոնատար անձինք, միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները երկօրյա համաժողովի ընթացքում քննարկել են աշխարհում մեծ կատվազգիների նվազող պոպուլյացիայի պահպանությանն ուղղված ջանքերի միավորման և համատեղ ծրագրերի իրականացման հնարավորթունները:

Նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը հանդես է եկել ելույթով և խոսել մեր երկրի հարուստ կենսաբազմազանության և կենդանական աշխարհի հազվագյուտ ու արժեքավոր ներկայացուցիչներից մեկի՝ Կովկասյան ընձառյուծի մասին: Նա նշել է, որ Ընձառյուծները էկոհամակարգի առողջության կարևոր ցուցանիշներ են, քանի որ զգայուն են իրենց միջավայրի փոփոխությունների նկատմամբ: Ուստի պաշտպանելով ընձառյուծին՝ մենք պաշտպանում ենք նաև Հայաստանի կենսաբազմազանությունը: Սակայն Հայաստանի խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում ընձառյուծի պոպուլյացիան գրեթե անհետացել է որսագողության և որսի քանակի նվազման պատճառով: Այդ իսկ պատճառով 2002 թվականին Հայաստանի շրջակա միջավայրի նախարարությունը և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (WWF Հայաստանը) համատեղ սկսեցին Հայաստանում

ընձառյուծի պահպանման ծրագիրը: Այն ժամանակ Հայաստանում ընդհատումներով նկատվում էր ընձառյուծի ընդամենը 1-2 առանձնյակ:Ծրագրի նպատակն էր ավելացնել ընձառյուծի պոպուլյացիայի թիվը Հայաստանում՝ պաշտպանելով նրա ապրելավայրերը: Ծրագրի նպատակն էր նաև ուժեղացնել բնության հատուկ պահպանվող տարածքների պաշտպանությունը, որոնք հանդիսանում էին ընձառյուծի բնակության բնական միջավայրեր, ինչպիսիք են «Խոսրովի անտառ» պետական արգելոցը և «Արևիք» ազգային պարկը: Բացի այդ, ծրագիրը նպատակ ուներ նվազեցնել ապօրինի գործողությունները պահպանվող տարածքներից դուրս, ստեղծել փոխհատուցման մեխանիզմներ՝ մեղմելու մարդկանց և ընձառյուծի միջև հակամարտությունը: Արամ Մեյմարյանն անդրադարձել է նաև WWF Հայաստանի հետ համատեղ մեկնարկած միգրացիոն ճանապարհներին կենսաբազմազանության պահպանմանն ուղղված էկոմիջանցքների ծրագրին: Նշել է, որ թիրախային շրջաններում և բնության հատուկ պահպանվող տարածքներում ստեղծվել է ուժեղ և շարունակական մոնիթորինգի համակարգ, տարվում են ընձառյուծի պահպանման վերաբերյալ իրազեկման աշխատանքներ: Նախարարի տեղակալը խոսել է նաև ընձառյուծին վնասելու կամ ապօրինի որսի դեպքում օրենքով նախատեսված պատժից: Եզրափակելով իր ելույթը՝ նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը ևս մեկ անգամ կարևորել է կենսաբազմազանության պահպանման նպատակով ջանքերի միավորման անհրաժեշտությունը: «Հայաստանում ընձառյուծի պահպանման ծրագիրը հիանալի օրինակ է այն բանի, թե ինչպես մարդիկ կարող են աշխատել մեր մոլորակի կենսաբազմազանությունը պաշտպանելու և վերականգնելու համար, մասնավորապես նա նշել է, որ պաշտպանելով առանցքային տեսակներին, ինչպիսիք են ընձառյուծը և այլ մեծ կատվազգիները՝ մենք ապահովում ենք էկոհամակարգի առողջությունն ու հավասարակշռությունը, ինչը կարևոր է այլ տեսակների գոյատևման համար:

Ելույթներով և թեմայի շրջանակներում իրենց երկրներում գրանցած արդյունքներով հանդես եկան նաև մյուս 13 երկրների ներկայացուցիչները:

Համաժողովի երկրորդ օրը իրականացվեց դաշտային այցելություն «Նագարհոլ» ազգային պարկ, որտեղ իրականացվեց կենդանադիտում, հնարավորություն եղավ վայրի բնության մեջ դիտարկել վագրի, փղերի կապիկների, թռչունների, կոկորդիլոսի, ջրասամույր, ինչպես նաև ծանոթանալ բուսական աշխարհի բազմաթիվ տեսակների: Ազգային պարկի անձնակազմի հետ քննարկվեց պարկի կառավարման համակարգը և առանձնահատկությունները:

### *8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ*

Հնդկաստանում կայացած համաժողովի ընթացքում գործարկվել է նաև «Մեծ կատուների միջազգային դաշինքը» (IBCA), որը կենտրոնանալու է աշխարհի յոթ խոշոր կատվազգիների (Tiger, Lion, Leopard, Snow Leopard, Puma, Jaguar and Cheata) պաշտպանության և պահպանման վրա: Դաշինքնին անդամակցությունը բաց է լինելու այն երկրների համար, որոնք հանդիսանում են այս տեսակների բնական ապրելամիջավայր և այլ շահագրգիռ երկրների, միջազգային կազմակերպությունները,

բնապահպանական գործընկերների, գիտական կազմակերպությունների և բիզնեսների համար, որոնք պատրաստ են նպաստել IBCA-ի նպատակներին և գործունեությանը:

### *9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ հնդկական կողմը կիրականացնի «Մեծ կատուների միջազգային դաշինք» փաստաթղթի նախագծի մշակման աշխատանքներ, որում ներառված կլինի նաև ֆինասավորման մեխանիզմը, անդամակցության հարցերը և այլն, որից հետո փաստաթղթի նախագիծը կշրջանառվի շահագրգիռ պետությունների միջև:

Նախարարի տեղակալ Արամ Մեյմարյան